

**ՀԵՌԱՀԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ց. Բեժանյան

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն

ԶՊԾԳ-ի հետաքրքրությունը հեռահար ուսուցման համակարգի նկատմամբ պայմանավորված է մեր ռազմավարական առաջնահերթություններով, որոնց թվում է.

- ծառայությունների մատուցման որակի բարձրացումը,
- աշխատաշուկայում անմրցունակ խմբերի համար ծառայությունների

մատչելիության ապահովումը:

Այս առաջնահերթություններով պայմանավորված՝ մենք առաձնացրել ենք շահառուների երկու խումբ. ներքին՝ մեր աշխատակազմը և արտաքին աշխատանք փնտրողները, որոնց թվում՝ աշխատաշուկայում անմրցունակ երկու խումբ.

- հենաշարժական խնդիրներ ունեցող հաշմանդամները,
- երեխա խնամող մայրերը:

Ինչու հատկապես այս խմբերն են հայտնվել մեր ուշադրության կենտրոնում: Գաղտնիք չէ, որ այսօր մեր երկրում հենաշարժական խնդիրներ ունեցող հաշմանդամների համար շատ գերատեսչություններ, այդ թվում՝ զբաղվածության ծառայությունները, կրթական հաստատությունները անհասանելի են, որի պատճառով այս խմբի ներկայացուցիչները հաճախ զրկվում են պետության կողմից իրենց տրված տարբեր երաշխիքներից, այդ թվում՝ նաև մասնագիտական ուսուցում անցնելու հնարավորությունից:

Աշխատաշուկայում մրցունակ մնալու խնդիր ունեն նաև երեխա խնամող մայրերը, որոնք մինչև աշխատաշուկա վերադառնալը կորցնում են իրենց հմտությունները և լուրջ դժվարություններ ունենում աշխատատեղ վերադառնալիս կամ նոր աշխատանք գտնելու հարցում: Այս դեպքում զբաղվածության պետական ծառայության կողմից առաջարկվող ամենարդյունավետ լուծումը մասնագիտական ուսուցման դասընթացներն են, որոնք այս խմբերի համար հիմնականում հասանելի չեն: Հեռահար ուսուցման մեթոդով մասնագիտական ծրագրերի ստեղծումը հնարավորություն կտա այս խմբերին ևս ընդգրկվել ուսուցման ծրագրերում և մրցունակ դառնալ աշխատաշուկայում:

Ասել, թե մենք անմիջապես կարող ենք անցնել ուսուցման այս մեթոդին, ճիշտ չէր լինի: Կան տարբեր խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն. դրանց թվում են.

- օրենսդրական կարգավորման խնդիրը, որը, օրինակ, մեզ հնարավորություն կտա պատվիրել կամ գնել նման ծրագիր,
- ստեղծված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակաս,
- ստեղծված ծրագրերի որակի գնահատման խնդիրը,
- ինտերնետը ոչ բոլորին է հասանելի
- մոնիտորինգի խնդիրը,
- ծրագրերի թարմացման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու խնդիրը,
- հասարակության իրազեկման խնդիրը:

ԷՌԻԱՑ © Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վաստահ չեմ, թե թվարկեցի բոլոր խնդիրները: Վատ չէր լինի, եթե կրթական հաստատությունների և շահագրգիռ կազմակերպությունների (ինչպիսին մերն է) ներկայացուցիչները վեր հանեին և համատեղ քննարկեին առկա խնդիրները, նաև առաջարկելով լուծումներ: Գաղտնիք չէ, ցանկացած կազմակերպության առաջընթացը, նրա կողմից մատուցվող ծառայությունների որակը ուղղակիորեն պայմանավորված է աշխատակազմի շարունակական ուսուցմամբ:

ԶՊԾԳ-ն աշխարհագրական առումով ամբողջ երկրի տարածքը ծածկող կառույց է: Այն ունի 51 տարածքային կենտրոն և 400-ից ավելի աշխատողներ: Աշխատակազմի շարունակական վերապատրաստման խնդիրը մեր կազմակերպության ռազմավարական առաջնահերթություններից է. նպատակ է դրված ներդնել համակարգի աշխատողների միասնական, ժամանակին համընթաց, շարունակական վերապատրաստումների համակարգ: Այս խնդիրն այսօր իրականացվում է ավանդական եղանակով. պարբերաբար համակարգի տարբեր օղակների աշխատողների համար կազմակերպվում են մինչև մեկ շաբաթ տևողությամբ վերապատրաստման դասընթացներ՝ մասնագիտական թեմաներով, որոնցում տարվա կտրվածքով ընդգրկվում են ընդամենը 50 անձ՝ այսինքն յուրաքանչյուր կենտրոնից 1-ը: Կախված ժամանակի սահմանափակությունից՝ սահմանափակ է նաև թեմաների ընտրությունը:

Վերապատրաստողների միջոցով ևս տարվա ընթացքում փորձում ենք որոշ թեմաներ ներկայացնել կենտրոնների աշխատողներին: Բայց արդյունքները գնահատելու նպատակով մեր կողմից կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ այս եղանակով տրամադրված ուսուցումը ոչ բոլորին է գոհացնում: Ավելին, կենտրոնների առաջընթացը համաչափ չէ, ոչ բոլորն են իրենց ստացած գիտելիքները կիսում գործընկերների հետ: Մինչդեռ վերջին 10 տարիների ընթացքում միջազգային ծրագրերի շնորհիվ կուտակվել է տարբեր թեմաներով հսկայածավալ ուսումնական նյութ, որը մատչելի մատուցելու պարագայում կարող էր էապես բարձրանալ զբաղվածության պետական ծառայության կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Հեռահար ուսուցման այս եղանակը մեր կազմակերպության համար հատկապես արժևորվում է, քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում զգալիորեն մեծացավ մեր շահառուների թիվը՝ մեծացնելով աշխատողների ծանրաբեռնվածությունը:

Հեռահար ուսուցման մեթոդը կարող է դառնալ այն գործիքը, որը կապահովի ողջ աշխատակազմի ուսուցումը՝ առանց աշխատանքից կտրվելու՝ խնայելով թե ֆինանսական միջոցներ, թե ժամանակ: Այն նաև աշխատողին հնարավորություն կտա ներկայացվող նյութին անդրադառնալ կրկին ու կրկին և յուրացնել այն ամբողջությամբ և խորությամբ:

Զբաղվածության ոլորտը այն ոլորտներից է, որտեղ ամեն ինչ, այդ թվում օրեսդրական դաշտը փոփոխվում է շատ արագ: Յուրաքանչյուր փոփոխությունից հետո անհրաժեշտ է լինում նորից տպագրել ամբողջ օրենսդրական փաթեթը: Այս առումով ևս այս մեթոդը մեզ համար նախընտրելի է և ծախսարդյունավետ:

Մեր կազմակերպության պարագայում աշխատակազմի ուսուցման համար նպատակահարմար է ընտրել էլեկտրոնային ուսուցման խառը մեթոդը, առցանց տարբերակը համատեղել տեղերում սեմինար-քննարկումների հետ: Այս հարցում կաջակցի վերապատրաստողների խումբը՝ որոնք կարող են վերապատրաստվել որպես E-learning ուսուցանողներ: Այս մեթոդը հնարավորություն կտա առցանց եղանակով ստացած

ԷՈՒԱՑ © Բոլոր իրավունքները պաշտպանված են:

գիտելիքները կիսել, քննարկել միմյանց հետ, այսպիսով բարձրացնելով նյութի յուրացման մակարդակը: Այն կօզնի նաև ստեղծված կուրսը պարբերաբար թարմացնել՝ համապատասխանեցնելով կազմակերպության ռազմավարությանը և կարիքներին:

Հեռահար ուսուցման համակարգի ներդրման ուղղությամբ որոշակի նախադրյալներ մեր կազմակերպությունում արդեն ստեղծված են.

- ղեկավար օղակում առկա է ուսուցման այս մեթոդի ներդրման անհրաժեշտության գիտակցում և պատրաստակամություն,
- ունենք վերապատրաստված թիմ,
- ունենք 24 վերապատրաստված վերապատրաստող՝ որոնք կարող են վերապատրաստվել որպես E-learning ուսուցանողներ և խառը ուսուցման մեթոդը կիրառելով՝ օգնել իրենց գործընկերներին,
- բանակցել ենք դոնոր կազմակերպությունների հետ, որոնք պատրաստակամ են աջակցել մեզ տեխնիկապես, նաև մեր կարողությունները ավելացնելու ուղղությամբ:

Էլեկտրոնային ուսուցման հեռանկարը մեզ համար շատ գայթակղիչ է, բայց ստացված փորձը օգնեց մեզ գնահատել մեր հնարավորությունները, ըստ այդմ՝ վերանայել մեր քայլերը: Հասկանալի է, որ մեր ունեցած փոքրաթիվ ռեսուրսները բավարար չեն մեր առջև դրված խնդիրները լուծելու համար, առավել ևս կազմակերպությունը նման գործառույթ չունի:

Կախված գործունեության բնույթից՝ մեր կազմակերպությունը չունի նաև IT բաժին, (մեր տեխնիկայի սպասարկումը պայմանագրային հիմունքներով իրականացվում է այլ կազմակերպության կողմից), որը դժվարացնում է մեր թիմի աշխատանքը տեղեկատվական տեխնոլոգիաների մասով:

Մեզ համար դեռևս հստակ չէ նաև ծրագրերի մատուցման մեխանիզմը: Ահա թե ինչու նախքան հեռահար ուսուցման համակարգի ներդրման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը անհրաժեշտ է փորձագիտական գնահատում՝ հստակեցնելու հետևյալը.

- մեր ունեցած տեղեկատվական տեխնոլոգիաները և միջավայրը բավարար է արդյոք նման ծրագրերի ներդրումը ապահովելու համար,
- մեր տարածքային կենտրոններում առկա համակարգչային տեխնիկական արդյոք ապահովում է այն նվազագույն տեխնիկական պահանջները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային ծրագրերը տեղերում օգտագործելու համար,
- արդյոք մեր աշխատողները մոտիվացված են և կարող են սովորել նման ուսուցման մեթոդով,
- արդյոք մեր աշխատանքային թիմը ունի բավարար գիտելիքներ՝ որակյալ դասընթացներ ստեղծելու համար,
- մեր ռեսուրսները բավարար են նման դասընթացներ ստեղծելու, ներդրելու, ուսուցանելու, գնահատելու, զարգացնելու համար:

Նման փորձագիտական եզրակացությունից հետո մենք կարող ենք մշակել մեր հետագա քայլերը և գտնել այն ուղիները, որոնք մեզ կտանեն էլեկտրոնային ուսուցման ճանապարհով: